ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ԳՅՈՒՄՐՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ

Ք. Գյումրի **28.02.2024**

Սույն փոխըմբռնման հուշագիրը (ՓՀ) կնքվում է Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության (հետայսու՝ ԵՆԿ), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա՝ ի դեմս ՀԿ նախագահ Արթուր Նաջարյանի, մի կողմից, և «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (հետայսու՝ ՇՊՀ) հետ, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա՝ ի դեմս ռեկտոր Երվանդ Սերոբյանի, մյուս կողմից (կազմակերպությունները միասին, հետայսու՝ Կողմեր), հաստատում են իրենց մտադրությունը ներքոնշյալ հարցերում՝

Նկատի ունենալով այն, որ երկու կողմերը ընդունում են յուրաքանչյուր կողմի անկախությունը և կնքում են սույն հուշագիրը փոխադարձ վստահության, հարգանքի և փոխադարձ պատասխանատվության ոգով,

հաշվի առնելով այն, որ սույն հուշագիրը հանդիսանում է երկկողմանի գործողությունների սահմանում, որի շուրջ կողմերը պատրաստակամություն են հայտնում համագործակցելու,

նկատի ունենալով այն, որ սույն հուշագիրը չի սահմանափակում յուրաքանչյուր կազմակերպության իրավունքը անկախ աշխատել մարդասիրական և զարգացման ծրագրեր իրականացնող այլ կազմակերպությունների հետ:

այսուհետ՝ Կողմերը համաձայնում են համագործակցել համաձայն հետևյալի.

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն հուշագիրը կնքվում է Կողմերի միջև համագործակցություն ստեղծելու նպատակով:

2. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄՆԵՐԸ

2.1 Կողմերը համաձայնվում են.

2.1.1 Փոխադարձ աջակցություն ցուցաբերել միմյանց գործունեություններում, մասնավորապես՝

2.1.1.1 կամավորական բնույթի աշխատանքներում երկկողմանի փոխադարձ ներգրավվում,

2.1.1.2 երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող տեղական և միջազգային ծրագրերի, այդ թվում՝ համապատասխան ոլորտներում փորձաքննությունների իրականացում, մասնագիտական գրականության, մեթոդական ձեռնարկների, աշխատությունների, պարբերականների և այլ նյութերի փոխանակում,

2.1.1.3 համատեղ աշխատանքային խմբերի ձևավորում և Կողմերի լիազորված աշխատակիցների միջոցով փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկում և լուծում,

2.1.1.4 կողմերի գործառույթների կատարման համար, ըստ աշխատանքային անհրաժեշտության, համապատասխան սարքավորումների, լաբորատոր և այլ միջոցների օգտագործում:

2.1.2 Գտնել ճկուն և փոխադարձ ընդունելի լուծումներ այն իրավիճակների համար, որոնք դուրս են կողմերից յուրաքանչյուրի վերահսկողությունից և որոնք կարող են ներազդել համագործակցության վրա (օրինակ՝ սոցիալական/քաղաքական միջադեպ, բնական աղետ և այլն):

2.1.3 Պարբերաբար վերանայել իրենց համագործակցությունը և շարունակաբար ուղիներ գտնել այն ամրապնդելու ու հզորացնելու համար:

2.2 ԵՆԿ - ն համաձայնվում է.

2.2.1 Ընտրել և ՇՊՀ-ին տրամադրել հնարավորություններ՝ տեղական և միջազգային, այդ թվում՝ Եվրոպական միության «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում կազմակերպվող ԵՆԿ ՀԿ գործընկերային ծրագրերին (միջազգային դասընթացներ, երիտասարդական փոխանակման ծրագրեր, ուսումնական այցեր և այլն) մասնակցելու համար,

2.2.2 բուհին տրամադրել տեղեկատվություն՝ ԵՆԿ-ի կողմից համակարգվող տեղական և միջազգային ծրագրերի մասին (դասընթացներ, երիտասարդական փոխանակման ծրագրեր, ուսումնական այցեր և այլն),

2.2.3 պահպանել կապ և ծրագրին նախապատրաստել բուհի կողմից ընտրված մասնակիցներին, աջակցել տեխնիկական հարցերով, միջազգային ծրագրերի դեպքում ըստ անհրաժեշտության տրամադրել խորհրդատվություն վիզային առնչվող թղթաբանության հարցում,

2.2.4 վերահսկել ծրագրի վերաբերյալ տեղեկատվության տարածումը,

2.2.5 բուհի կողմից ընտրված մասնակիցների՝ ծրագրին ոչ համապատասխան լինելու դեպքում միջամտել:

2.3 ՇՊՀ - ն համաձայնվում է.

2.3.1 ԵՆԿ-ի կողմից տրամադրված ծրագրի մասին տեղեկատվությունը տարածել բուհի ուսանողության և աշխատակազմի շրջանում՝ համագործակցելով դեկանատների և ուսխորհրդի հետ,

2.3.2 ընտրել մասնակիցներ՝ ծրագրի չափանիշներին համապատասխան,

2.3.3 տրամադրել տեղեկատվություն ընտրված մասնակիցների մասին՝ կազմակերպության կողմից հայտարարված վերջնաժամկետին համապատասխան,

2.3.4 կատարել իր կողմից ներկայացվող մասնակցի ընտրությունը,

2.3.5 երաշխավորել դիմորդների մասնակցությունը:

3. ՀՈՒՇԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

3.1 Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2026 թ. դեկտեմբերի 31-ը:

3.2 Կողմերի փոխադարձ համաձայնությամբ հուշագրի ժամկետը կարող է երկարաձգվել:

4. ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

4.1 Սույն հուշագիրը վաղաժամկետ լուծել ցանկացող կողմը պարտավոր է մյուս կողմին իր մտադրության մասին գրավոր տեղեկացնել առնվազն 30 օր առաջ:

4.2 Սույն հուշագիրը վաղաժամկետ կարող է լուծվել կողմերից որևէ մեկի պահանջով, եթե մյուս կողմը խախտում կամ պարբերաբար չի կատարում իր պարտավորությունները:

4.3 Սույն հուշագրի ցանկացած փոփոխություն կամ լրացում, ինչպես նաև հայտարարություն կամ ծանուցում՝ բխած կամ կապված սույն հուշագրի հետ, պետք է լինի գրավոր, ներառյալ էլեկտրոնային փոստը:

4.4 Սույն հուշագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն հուշագրի կատարման ընթացքում Կողմերի միջև ծագած վիճելի հարցերը լուծվում են բանակցությունների միջոցով:

5.2 Հուշագրի բոլոր փոփոխությունները և լրացումները ձևակերպվում են լրացուցիչ համաձայնագրերով և ստորագրվում Կողմերի կողմից: Լրացուցիչ համաձայնագրերն ուժի մեջ են մտնում Կողմերից կողմից վերջինի ստորագրելու պահից, եթե այդ լրացուցիչ համաձայնագրում ուժի մեջ մտնելու այլ ժամկետ սահմանված չէ:

5.3 Սույն հուշագիրը կազմվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ
Իրավաբանական հասցե՝ ք. Գյումրի, Հովսեփյան 5/1
Գործունեության հասցե՝ ք. Գյումրի, Ալեք Մանուկյան 26
ՀՎՀՀ 05536501
ՀԿ նախագահ՝

Արթուր Նաջարյան
Անուն/Ազգանուն

Ստորագրություն

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ
Հասցե՝ ք. Գյումրի, Պ. Սևակ 4
Ռեկտոր՝

Երվանդ Սերոբյան
Անուն/Ազգանուն

Ստորագրություն